Երեւում էր, որ Ծովիկը խնձորի ծառից տեսել էր ինձ: Վերադառնալով պարտիզից, մի զամբիւղի մէջ բերեց ինձ համար մրգերի ամենաընտիր տեսակներից եւ, ամբողջ զամբիւղը դնելով իմ մօտ, ասաց.

— Որից որ սիրում ես, նրանից կե՛ր:

— Բոլորը լաւ է, քո քաղածը վատ չի լինի, — պատասխանեցի ես, նայելով ուղիղ նրա արեւի ջերմութիւնից շառագունած երեսին:

Նա ժպտաց եւ հեռացաւ, երբ նկատեց, որ Ասլանը վերադարձաւ իր հօր հետ:

Տեսնելով իմ մօտ դրած զամբիւղը, նրա հայրը ասաց ինձ.

— Դուք, փոքրիկներդ, աւելի բախտաւոր էք մեզանից, որ աշխարհի դարդերը չէք հասկանում...

Յետոյ նա դարձաւ դէպի Ասլանը:

— Տեսնո՞ւմ էք, ինչպէս ջահէլները միմեանց յարգել իմանում են. այդ պտուղները անպատճառ Ծովիկի քաղածը պէտք է լինի:

Նրանք մտան սրահի մէջ բացողող դռնից եւ երկար ժամանակ մնացին ներսի սենեակներում: Երբ Ասլանը դուրս եկաւ, նրանից հարցրի:

— Ի՞նչ կար այնտեղ:

— Մի հիւանդ կար... — պատասխանեց նա, էլ չխօսեց:

Թ. ԳԻՇԵՐԸ ԱՒԱՆՑ ԳԻՒՂՈՒՄ

Երեկոյեան դարձեալ բոլորը հաւաքուեցան սրահի մէջ: Ասլանը նստած էր իր մինդարի վրայ, վարպետ Փանոսը նրա մօտ, ես իմ տեղում, իսկ տան տէրը երբեմն նստում էր, երբեմն կանգնում էր, երբեմն գնում էր իր մարդիկներին զանազան պատուերներ տալու:

Փայտեայ բարձր աշտանակի վրայ դրած էր մի խեցեղէն ճրագ, որը աղաւնու նմանութիւն ունէր. նրա միջում կտաւատի ձէթ էր լցրած, իսկ կտուցից դուրս ընկած պատրոյգը հանդարտ վառուելով տարածում էր աղօտ, կանաչագոյն լոյս իր շրջակայքում: Ձէթից եւ մրից բոլորովին սեւ գոյն էր ստացել այդ աղաւնին:

Խօսակցութիւնը գլխաւորապէս ծովակի մասին էր: Խօսում էին նրա թեւաւորութեան վրայ, արդեօք նա խաղա՞ղ է, թէ անհանգիստ, տարոյ ո՞ր ամիսներում սովորաբար պատահում են ալեկոծութիւններ. խօսում էին նաւահանգիստների մասին, թէ ո՞ր կողմերի կամ ո՞ր եզերքի մօտ են գտնուում,